բերդ ամրոցի աւերակները. սրանց մօտ է այն փառաւոր անցեալի ողորմելի Փէիլէվան գեղը:

Պահլաւան վտակի առուակներն են, ձախից Ցուջունա, Ջերեսա (աւերակ), Օխորդիա, Ենիմահլա, Բուլտախետ. աջից՝ Պահլաւան, Գդրեվետ, Մուրկովիտ եւ Կատալ-ախիա, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց աւերակներով եւ հանդերով:

Իչկալա ջրերից մինչեւ Փէհլէվանի վտակը Ճորոխն են թափւում ձախից՝ Դավկարա, Արչուետ, Ջկատուրետ, Ծոցխերի եւ Ջեդուբանի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը: Ճորոխը Փէհլէվան վտակից ցած գալով՝ նախ ընդունում է Բերջեվ (պարթեւ) առուակը Ստ. Մարադիտ ամրոցի մօտ, ուր գտնւում է Բերջեւի աւերակ մեծ տաճարը. ապա Ստ. Մարադիտի առուն, որին մօտ է երկրորդ Բերջեւի տաճարի աւերակները եւ այգեստանները: Սրանցից յետոյ Ճորոխին խառնւում է Կարա-Շալվար առուակը Կիրա-Շալվար գեղից, որից քիչ ցած Վ. Մարադիտ առուն է խառնւում Ճորոխին, Մաճիխի, Լեռ-Պիրի մօտ, Միրվերի քով: Սրանցից ցած Ճորոխի դելտայում թափւում են — Մախօ, Մուլվանետի, Բօլօկօ եւ Ջանալ առուները, որոնցից 3—4 վերստ աւելի հիւսիս-արեւմուտք Ճորոխն ինքն է խառնւում Սեւ-Ծովին: Այս առուակների վրայ են Նուսրետիէ,